Գոմշախրամ ըսուած տեղւոյն մօտ կան փայտայարկ քարայրներ՝ Ցէրէր կոչուած, որոց մէջ երբեմն կ'ապաւինէին Աշտարակի բնակիչք վտանգաց ժամանակ. հոն կ'երեւին նաեւ քանդուած մատրան հետքեր։ Աշտարակցիք ընդհանրապէս շատ մթր և աչքաբաց մարդիկ են, ունին մեծ յարգանք դէպ ի լուսաւորութիւնը, և շատ կան Մոսկուայի մէջ և ուրիշ տեղեր ուսումնաւարտ Աշտարակցիներ. այժմ եւս պակաս չեն ուսանողներ զանազան քաղաքաց մէջ։ Բոլոր Աշտարակցիք ունին այգիներ և իրենց գլխաւոր պարապմունքն է խաղողէն ընտիր գինի և օղի պատրաստել, որոնք կը ծախեն Ալեքսանդրապօլի, Ախալքալաքի, Ջալալօղլուի և Նոր Պայազիտու գաւառաց մէջ։ Առհասարակ գիւղիս բնակիչք շատ յաջողակ և առուտուրէ հասկցող մարդիկ են, և Աշտարակի մէջ եւս կան բաւական թուով կըրպակներ։

Աշտարակի բոլոր բարեյաջող հանգամանքներու պատճառաւ է, որ ի հնումն մեր թագաւորները, նախարարները և հայրապետները կ'երթային հոն, եթէ ոչ ամբողջ ամսոն, գէթ մի քանի շաբաթ կամ մի քանի օր հրաշազարդ գիւղիս վայելչութիւններով զուարճանալու։ Շատ անգամ ալ Աշտարակ, իբր եզական և անզուգական յատկութեանց շնորհիւ թշուառութեանց և տխուր տեսարանաց եւս ենթարկուեր է։ Երեւանու խաներն և բէկերը ոչ սակաւ չարչարանքներ և նեղութիւններ հասուցեր են Աշտարակցոց վրայ։ Երբեմն եղեր է նա սեփականութիւն Էջմիածնի, երբեմն ալ, որ և է պարսիկ խանի մը կալուած, ապա Պարսից տիրապետութեան։ Ռուսաց Պետութեան ձեռքն անցնելէ առաջ, եթէ լաւ տեղեկանանք պատմութեան, կը տեսնենք որ Աշտարակը քանի մը տասնեակ տարիներ շարունակ մի և նոյն դրութեան մէջ չէ մնացեր, և այս ամէնը, բոլոր իրեն նմանները դերազանցելուն պատճառաւ։ Աւանիս ձորեզերքը տեսակ տեսակ վայրենի բոյսերէ զատ, կ'ընծայէ նաեւ պատուական սննդարար բանջարեղէններ, ինչպէս՝ եղինջ, ղողլապատ, ծնեբեկ, պարոն բանջար, և այլն։

Գերմանացի Գոռ բուսաբանը, Աշտարակի սահմանաց և Քասաղի ձորոյն մէջ կը յիշէ 30 տեսակ աւելի բուսոց անուանք՝ պտղաբեր ծառերէն զատ. ասոնցմէ մասնաւորաբար կը գովէ ծիրանն ու դեղձը։ — Կոռոտ. ծաղիկ, 1–134, տպ. Թիֆլիս, 1878։ Մշակ, 1874, թ. 45։ Շահխաթունեանց, Ստրգր. Էջմ. Բ. 83–89։ Այրարատ, 185–188։

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷՓԻՐԿԵԱՆ

ԱԿՆԱՐԿ ՄԸ՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԷՆ

ԱՌԱՋ՝ ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ ՎԻՃԱԿԻՆ

ՎՐԱՑ։

Ամենդիսիթիւնն, զոր բովանդակ ազգ մարդկային միշտ սիրած է և պաշտած ի սկզբանէ հետէ, խմաստուն և քննասէր անձանց կաճառին մէջ եւս բարձրագոյն բազմելով նոյն յարգանաց պաշտաման արժանացած է՝ ոչ շամանդաղի պէս ցոլուող խնկոց ծխմամբ և կամ ընդունայն գովեստից թառամելի ծաղկօք, այլ ճշմարտին և ճշմարտութեան անընկնելի, անխոնջ քննութեամբ՝ զոր հմուտ քննասէրն պիտի ծառայեցընէ՝ ոչ թէ իւրաքանչիւր ազգաց ինքնապանծ փառասիրութիւնը կամ անիրաւ պահանջները պարարելու, այլ միայն և միակ ճշմարտութիւնը անստուեր լուսոյ մէջ հաստատելու համար։ Բայց լուրջ, ճշմարիտ և ուղիղ քննասիրութիւնն միայն կարող է սիր և է աւանդութիւնը այսպէս զնեալ զտել և ճշմարտութիւնը պայծառացընել. վասն զի անոր թեւերն հուժկու են և զօրաւորք, նա՝ անթարթափ աչօք կը ձգէ իւր հայեացքը և արծուակերպ կը խոյանայ ճշմարտութեան անթառամ պսակը խլել յափշտակելու համար։

Փափաքելի է և մեզ ուղղամիտ, և ոչ ոմանց արդի կերպարանափոխ, քննադատութեան թեւոց վրայ բազմած սլանալ արշաւել դէպ ի կանխադոյն ժամանակս քան զՍ. Գր. Լու-

digitised by A.R.A.R.@

սուորիչ մեր, և նոյն քննութեան աչօք դիտել, կամ լաւ եւս՝ սոսկ ակնարկ մը տալ Ս. Լուսաւորչին համատարած լուսաւորութենէն առաջ՝ Հայ ազգիս աւետարանական լուսէն ընդունած նշուլից տարածուբեան և տեւողութեան վրայ։ Եւ զրեթէ միայն Աստուածեան լուսատիւռ ճառագայթներն պիտի կարենան այդ սուուերամած զարուց խորհրդաւոր մթութիւնը փարատել գէթ մասամբ։ Ուստի ճշմարիտ և անխառն աւանդութեան սիրով՝ ուզեցինք զգուշութեամբ մտնել անոր բովուց մէջ՝ ուսումնասիրելու կանխագոյն քան զմեզ քննողաց և գրողաց գաղափարները, և անոնց գիտական շինուածոյն մօտիկ գնել գէթ փոքրիկ սրբատաշ քար մը՝ յիշելով և յիշեցընելով որ «չիք ինչ նոր ընդ արեգամբ»։

Ամէն ազգ ունի իրեն սեփական աւանդութիւնները՝ զորս իբրեւ սրբազան իրեր սքողարկեալ կը պահպանէ մեծ խնամով, և բոլոր ոգւով կը պաշտպանէ զանոնք՝ յանուղիղ զրչաց արձակուած սլաքներու դէմ։ Այսպէս Հայն եւս ունի իւր սուրբ և սրբազան համարուած աւանդութիւնները (անտեղի և անհիմն աւանդութիւնք օտար են այս դասակարգէն), որոց վրէժինդիր աւանդապահ եղած են դարերու շարք մը և անոնց մէջ իբրեւ յերկնակամարի փայլող մեր եկեղեցոյ նշանաւոր Հարք և մատենագիրք՝ եթէ բանիւ և եթէ գրով։ Իսկ այլ հայկական օտար և սրբազան աւանդութեանց մէջ բարձրագոյն տեղին կը գրաւէ յառաջ քան զՍ. Լուսաւորիչ՝ Հայաստանի մէջ աւետարանական լուսոյ ծագման և տեւողութեան՝ չափով մը համաշխարհական աւանդութիւն, որ սրչափ կարեւոր է և պատմական, նոյնչափ ալ աղօտ է և ընդ աղօտ տեսանելի, զոր ամենասուր աչք հանճարեղ իսկ քննագատից և պատմաբանից հազիւ հազ կրցեր են ցարդ պատմաքանօրէն նշմարել։ Եւ ոչ ոք համարձակած է վճռելու՝ թէ ինքն յաջողեր է այդ ցանկալի ճշմարտութեան արեգակը ծագել տալ, մանաւանդ թէ ոմանք կնճիռ կնճռոյ մէջ անցընելով՝ մթագոյն եւս ըրեր են իրենց լուսաւորելի խնդիրը. վասն զի երկու իրաբմէ իսիպէս տարբեր խնդիրներ իրարու մէջ ազուցանելով, իրենք շփոթեր և զայլս եւս շփոթցուցեր են։

Ցիրաւի, Ա. Ոմանք հայկական եկեղեցւոյ բացարձակ անկախութիւնը ցուցընելու համար՝ ճշմարիտ աւանդութիւնը խոշորացուցով դիտեր և զայն ներկայացուցեր են հակառակ ամէն պատմական փաստից։ — Բ. Այլք եւս՝ այն եկեղեցւոյ առաքելական ծագման ի նպաստ փաստ համարեր են Ցերտուղիանոսի մի խօսքը։ Այսպիսի կարծիք մը տեսնուեցաւ Իրաղիկ օրաթերթին մէջ[1], Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վերնապրով. յորում յարգոյ Յովսեփ Եպիսկոպոսն այսպէս կը գրէ. «Մինչեւ 1886 Հայ. եկեղեցւոյ ծագման մասին պատմական միայն մէկ գրոց կար։ Դեռ ծաղումներու խնդիրը միտքերը չէր չարչրկած։ ..... Հայոց եկեղեցւոյ նախնական շրջանի պատմութեան խրատաքը լեցնել հարկ էր՝ զոր և ոչ մէկը ձեռնարկեց հայագէտներէն ու Վիեննացիներէն.....։ Այս պատուաբեր աշխատութիւնը պահուած էր բարեխտաբար Աստ. մեծ ամբողջին վարդապետներուն վարդապետ Գեր. Եղիշէ եպ. Դուրեանի, Աստ. եկեղեցւոյ գերագանց պատմաբան վարդապետին..... (որ) գիտական աշխարհի անծանօթ մնացած եկեղեցական յիշատակարաններ պրպտելով՝ հայագէտներու և Վիեննացւոց ուսումնասիրութեանց մէջ դիտուած մեծ պակասը լեցուց և անմխիթար վիճակութեամբ, հաւատի ալրիւրով ապացուցուց Հայ. եկեղեցւոյ առաքելականութիւնը, հինէն բոլոր տարբեր հիման վրայ ....։ (Եւ այս) փաստը՝ Ցերտուղիանոսի (160—240) մէկ կոչումն է... (որ) սակայն յառաջ կը բերէ Գործք Առաքելոցի Բ. գլ. 9—10 համարները. — «Ընդ ամենայն երկիր և (?) բարբառ նոցա և մինչեւ ի ծագս աշխարհին Հայք (?) նոցա .... Պարթեւ, Մարք, Իլամացիք, Հայերը, և այլն». — Մինչ Գործք Առաքելոցի արդի խմբագրութեան մէջ Հայերի տեղ Հրեայ կը կարդանք։ .... Նորանշան իմն է.... այնչափ սուրբ գրոց համաբարբառներ, մեկնու-

---

1. Թիւ 4. 1899։

digitised by A.R.A.R.@

թիւններ, քննադատութիւններ կատարուելով հանդերձ և ոչ մէկ դոյզն ակնարկութիւն անդամ Ցերուսալիմնոսի ընթերցուածքին»։ Քննասէր Ցուսուածագրիս յօդուածէն այսչափ երկայն հատուած մէջ բերինք, որպէս զի խնդիրը լաւ պարզուի. մեր յաջորդ յօդուածին մէջ անշուշտ պիտի ներուի մեզի Գեր. Դուրեանի՝ Ցերուսալիմնոսէն առած՝ այս փաստին վրայ՝ մեզ կաքեւոր երեւցած խորհրդածութիւնները ընելու։ — Գ. Ոմանք ալ ընդհակառակն, հայկական եկեղեցւոյ կախումը հաւաստելու համար՝ չափազանց մանրացուցով դիտեր են նախնի աւանդութիւնը։

Բայց, ինչպէս որ եկեղեցւոյ մը անկախութեան կարծեաց դէմ պատերազմելու համար՝ ամէն պատմական և պատկառելի հաւաստիք ձրի կերպով մերժին՝ անիրաւել է ընդդէմ պատմութեան, սոյնպէս նաեւ նոյն անկախութեան կարծիքը հաստատելու համար՝ դիմեն հաւաստի պատմութենէ օտար տեղերու, և փաստեր ի մէջ բերեն հակառակ հին համազգային և տիեզերական կանոնական իրաւանց, աստուածաբանական սկզբանց՝ է վիրաւորել աւանդութեան և պատմութեան փափուկ բջերը։

Սակայն թուի թէ, հակառակ բոլոր վերոյիշեալց, ճշդիւ որոշելու ենք հետեւեալ երկու խնդիրները, այսինքն ա. Հայկական եկեղեցւոյ բացարձակ անկախութիւնը. — բ. Թէ արդեօք յետ ՍՍ. Թադէի և Բարթողիմեայ առաքելական քարոզութեանց՝ Հայաստանի մէջ տեւեց աւետարանական լուսոյ շառաւիղն մինչեւ ի Ս. Լուսաւորիչ մեր եկեղեցական անընդհատ նուիրապետութեամբ։ — Եւ այս կրկին խնդրոց մասին դիտելու է՝ որ որչափ եկեղեցւոյ մը բացարձակ անկախութեան խնդիրն գրեթէ սոսկ կանոնական իրաւանց և աստուածաբանական, միով բանիւ՝ կրօնական խնդիր մ'է, այնչափ ալ՝ մինչեւ ցՍուրբն Գրիգոր Լուսաւորիչ անընդհատ նուիրապետութեան խնդիրն է զուտ սոսկ պատմական։

Ցայտնի է՝ թէ խնդրոյս այս կրկնակի տեսութեան առաջին մասին կրօնական քննութեանը՝ չեն հանդուրժեր Բազմավիպի ուսումնական էջերն. ուստի ներուի մեզ, ներկայ յօդուածիս վերնագրին հաւատարիմ մնալով սուղ ակնարկ մը ձգել խնդրոյս պատմական մասին վրայ, փափաքելով ցուցընել՝ որ տրամաբանական օրինաց հակառակ է եկեղեցւոյ մը բացարձակ անկախութիւնը մերժելու կամ հաստատելու համար՝ զոհել ուրիշ հաւաստի պատմական կամ զէմ հաստատուն աւանդական ճշմարտութիւններ, որպիսի է և այն՝ զոր յաջորդ յօդուածով պիտի ջանանք դնել լուսաբանել։

Շարայարելի Հ. Ս. ՈՍԿԵԱՆ

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԵՒ

ՀՈՄԵՐԻ

ԻԼԻԱԿԱՆԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Բազմավէպի Ցունուարի պրակին մէջ ակնարկ մը տալով Հ. Ա. Կ. Բագրատունւոյն կենաց ու գործոց վրայ, Իլիականի թարգմանութեան մասին՝ յանդգնելով ըսած էի, թէ «գուցէ քան զընդարձին անդամ կը գերազանցէ իր ճարտար պէսպիսութեամբ», և այլն, և ուրիշ առթի կը թողուի՝ ըսածս օրինակներով ցուցնելու. ներկայ յօդուածովս ահա պիտի ջանամ խոստումս կատարելու։ Բայց դեռ Իլիականի թարգմանութեան մէջ չմտած, պատշաճ կը համարիմ՝ իբր լրացուցիչ Ցունուարի Ակնարկին՝ աւելցընել մի քանի տեղեկութիւններ եւս՝ որոնք չէին յիշուած հոն։

Բագրատունւոյն այրած գործերն յիշելու ատեն[1], յիշած էի անոր ցաւն «ընդ կորուստ

1. Հմմտ. Բազմ. 1900 էջ 23, ժամ.****։

digitised by A.R.A.R.@